ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 02/2022

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԴԵՊՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 16 սեպտեմբերի 2022 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի և Լ. Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2022 թվականի օգոստոսի 11-ին «Հետք» էլեկտրոնային լրատվամիջոցի «Վայքի համայնքապետը 537 միլիոն դրամի պայմանագրեր է կնքել իր կնոջ ընկերության հետ» վերտառությամբ (https://hetq.am/hy/article/147254) հրապարակումը.

պարզեց

1. **Ըստ հրապարակման տեղեկությունների՝**

1.1 Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանը 537 միլիոն ՀՀ դրամի պայմանագրեր է կնքել իր կնոջը պատկանող ընկերության հետ,

1.2 Մխիթար Մաթևոսյանը մինչև 2022 թվականը հանդիսացել է ընկերության ղեկավար, համայնքի ղեկավար ընտրվելուց հետո ընկերության բաժնեմասը և կառավարումը հանձնել է կնոջը՝ Մերի Մարգարյանին,

1.3 2022 թվականի ընթացքում Վայքի համայնքապետարանը՝ ի դեմս Մխիթար Մաթևոսյանի, 4 պայմանագիր է կնքել «Մավշին» ՍՊԸ-ի հետ,

1.4 Մինչև Մխիթար Մաթևոսյանի՝ Վայք համայնքի ղեկավար ընտրվելը «Մավշին» ՍՊԸ-ն մասնակցել է պետական գնումների գործընթացին և պետական տարբեր մարմինների հետ կնքել 15 պայմանագիր՝ 345 միլիոն դրամ արժեքով,

1.5 2019 թվականին Մխիթար Մաթևոսյանին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով («Մավշին» ընկերության միջոցով առերևույթ հափշտակության դեպքով): 2021 թվականին գործը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով (մեջբերումը հրապարակումից)»:

2. **Նշված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել հետևյալ փաստական տվյալները.**

2.1 Մխիթար Մաթևոսյանը ՀՀ վարչապետի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի 1146-Ա որոշմամբ նշանակվել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնակատար,

2.2 Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2021 թվականի դեկտեմբերի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընտրվել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար,

2.3 ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի N 190 որոշման համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2021 թվականի դեկտեմբերի 17-ին ստանձնել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը:

2.4 Վայքի համայնքապետարանի պաշտոնական կայքէջի տվյալների համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2012-2021 թվականներին զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ, եղել է «Մավշին» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրենը,

2.5 Հայտարարատու պաշտոնատար անձի 2021 թվականի գույքի, եկամուտների և շահերի տարեկան հայտարարագրում Մխիթար Մաթևոսյանը նշել է 100 % բաժնեմասնակցություն Ընկերությունում (ՀՎՀՀ 08911644): Ընկերության բաժնեմասը ձեռք է բերվել 2013 թվականի հունվարի 16-ին, դադարեցման ամսաթիվը հայտարարագրում նշված չէ,

2.6 Ընկերության Մխիթար Մաթևոսյանին պատկանող բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ պայմանագիր առկա չէ,

2.7 Հավատարմագրային կառավարման պայմանագրի մասին տվյալ չի ներկայացվել նաև Մխիթար Մաթևոսյանի 2021 թվականի պաշտոնի ստանձնման հայտարարագրում,

2.8 Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը 2013 թվականի հունվարի 16-ից մինչև **2022 թվականի փետրվարի 16**-ը հանդիսացել է Ընկերության (ՀՎՀՀ 08911644)

(այսուհետ՝ Ընկերություն) **միակ բաժնետերը և** մինչև **2022 թվականի փետրվարի 18**-ը՝ **գործադիր մարմնի ղեկավարը,**

2.9 Մխիթար Մաթևոսյանն Ընկերության իր բաժնեմասը **2022 թվականի փետրվարի 11-ին** նվիրատվության պայմանագրով օտարել է կնոջը՝ Մերի Մարգարյանին, և Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների (Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային կայքից բեռնված էլեկտրոնային քաղվածք) համաձայն՝ 2022 թվականի փետրվարի 16-ից Ընկերության 100% բաժնեմասի բաժնետեր է հանդիսանում Մխիթար Մաթևոսյանի կինը՝ Մերի Մեխակի Սարգսյանը, ով 2022 թվականի փետրվարի 18-ից զբաղեցնում է ***ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը*** (հիմքը՝ Մերի Մարգարյանի դիմումը, առ՝ 14-02-2022 թվական, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային կայքից բեռնված էլեկտրոնային քաղվածք),

2.10 **Ընկերության բաժնեմասը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում չի հանձնվել հավատարմագրային կառավարման, իսկ նվիրատվության պայամանագրով բաժնեմասի օտարման պայմանագիրը կնքվել է Մխիթար Մաթևոսյանի՝ Վայքի համայնքապետի պաշտոնում պաշտոնավարման ընթացքում:**

2.11 Գնումների armeps համակարգի տվյալների համաձայն՝ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև օգոստոսի 16-ը Ընկերությունը ներկայացրել է գնման գործընթացի մասնակցության 8 հայտ (6-ը Վայքի համայնքապետարանի կողմից պատվիրված գնման գործընթացներում) և կնքել 4 պայամանագիր: Պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 488,000,000.00 (չորս հարյուր ութսունութ միլիոն) ՀՀ դրամ: Բոլոր 4 պայմանագրերը կնքվել են Վայքի համայնքապետարանի հետ: Պայմանագրերից երկուսը գնանշման հարցում ընթացակարգով, երկուսը՝ բաց մրցույթով,

2.12 Գնումների armeps համակարգի տվյալների համաձայն՝ Ընկերությունը նախկինում չի մասնակցել Վայքի համայնքապետարանի կողմից պատվիրված մրցույթներին, մինչդեռ Մխիթար Մաթևոսյանի՝ Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելուց հետո մինչ օրս Ընկերությունը պայմանագրեր է կնքել միայն Վայքի համայնքապետարանի հետ,

2.13 Վայքի համայնքապետարանը Ընկերության հետ գնման պայմանագրերը (ծածկագրեր՝ ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/7/1, 201782857, 201782877, 201782869) կնքել է ի դեմս համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի և վերոնշյալ պայմանագրերը ստորագրված են վերջինիս կողմից:

3. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածի 1-ին մասի սահմանմամբ՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ **պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ**

ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է անձի **լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը** (...), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝ ***իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը:***

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց: **Սույն հոդվածի դրույթները տարածվում են** պետական պաշտոն զբաղեցնող անձանց (...), **համայնքների ղեկավարների**, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների **վրա**:

4. Մինչև ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-268-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին) «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող** անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել **իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում**, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում ***նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝*** **մեկ ամսվա ընթացքում,** պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

Նույն հոդվածի 6-րդ մասով ամրագրված են «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով առևտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելու դեպքերը, որի 1-ին կետը, մասնավորապես, սահմանում է առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելու դեպքը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում **առևտրային կազմակերպության մասնակից լինելը,** բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման, իսկ 10-րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ **մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:**

Վերոգրյալից հետևում է, որ Մխիթար Մաթևոսյանը 2021 թվականի դեկտեմբերի 17-ին համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելուց հետո մեկամսյա ժամկետում պարտավոր էր ապահովել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարումը, մինչդեռ վերջինս դադարեցրել է Ընկերությունում իր մասնակցությունը 2022 թվականի փետրվարի 16-ին՝ օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ: Վերջինս հանրային պաշտոն ստանձնելուց հետո մինչև 2022 թվականի փետրվարի 18-ը շարունակել է զբաղեցնել ***Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը:***

5. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ դեպքերի, Հանձնաժողովը կարող է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ հարուցել լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով Օրենքի 27-րդ հոդվածով, ինչպես նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 31-րդ հոդվածի 2-րդ մասով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման, ինչպես նաև իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով հարուցել վարույթ:
2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ